



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0230/05/21

Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան

Դատավորներ՝

Գ. Սոսյան

Հ. Խաչատրյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0230/05/21

**2025թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող  
զեկուցող*

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի ապրիլի 22-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Էդգար Խառատյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 23.09.2020 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» 913/1 որոշումը և Կոմիտեի նախագահի տեղակալի 11.11.2020 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 23.09.2020 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» 913/1 որոշումը և Կոմիտեի նախագահի տեղակալի 11.11.2020 թվականի որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 18.03.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2024 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. Դատարանի 18.03.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցն ամբողջությամբ բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 155-րդ, 163-164-րդ, 170-րդ, 173-174-րդ հոդվածները, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 193-րդ հոդվածը, ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը և 27-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իր եզրահանգումները կառուցել է բացառապես հայցվորի փաստարկների վրա՝ անտեսելով ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 155-րդ, 163-164-րդ, 170-րդ, 173-174-րդ հոդվածների կարգավորումները:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում արտոնությամբ ներմուծված ապրանքը չի արտահանվել կամ ձևակերպվել այլ կամ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, Ընկերությունը չի դիմել ՀՀ կառավարություն՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգման համար՝ դրսևորելով անգործություն, ինչի արդյունքում խախտվել է հետադարձ արտահանման պարտականությունը:

Օրենսդրական կարգավորումների տեսանկյունից ամբողջությամբ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, ըստ որի՝ «ենթադրյալ խախտման համար ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի չափը

որոշելիս մաքսատուրքերը չպետք է ներառվեն մաքսային վճարների մեջ, քանի որ ՀՀ կառավարության 14.03.2019 թվականի թիվ 215-Ա որոշման հիմքով հայցվոր ընկերությունն ազատված է եղել մաքսատուրքից:»։ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը հակասում է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի բովանդակությանը։ Ընկերության կողմից «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքները «բաց թողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով հայտարարագրման դեպքում կառաջանան մաքսային վճարներ, այդ թվում՝ մաքսատուրքի գումար։

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2024 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 18.03.2022 թվականի վճռին։

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 14.03.2019 թվականի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» թիվ 215-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Թիվ 215-Ա որոշում) ՀՀ կառավարությունը բավարարել է Ընկերության կողմից ներկայացված հայտը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար և սահմանված կարգով կիրառել է համապատասխան արտոնությունը՝ համաձայն հավելվածի ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ։

Թիվ 215-Ա որոշման հավելվածի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի արտոնությունից օգտվող հումքն է կանաչ ձիթապտուղը (**հատոր 1, գ. թ. 81-83**):

2) Ընկերության կողմից 04.09.2019 թվականին թիվ 05100010/040919/0081996 ապրանքների հայտարարագրով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել է 39.200կգ նետտո քաշով չվերամշակված կանաչ ձիթապտուղ (**հատոր 1, գ. թ. 93-94**):

3) 14.09.2020 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, ըստ որի՝ «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ-ի կողմից «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների

մնացորդ 29,930.50 կգ մասը սահմանված ժամկետում՝ մինչև 03.09.2020 թվականը, չի վերաարտահանվել կամ ձևակերպվել այլ մաքսային ընթացակարգով (**հատոր 1, գ.թ. 72-73**):

4) Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 23.09.2020 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» 913/1 որոշմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Խառատյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նշանակվել է տուգանք՝ 2.075.950 ՀՀ դրամի չափով: (**հատոր 1, գ. թ. 7-8**):

5) Կոմիտեի նախագահի տեղակալի 11.11.2020 թվականի որոշմամբ Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 23.09.2020 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» 913/1 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման (**հատոր 1, գ. թ. 10-13**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ մաքսային արտոնությունից օգտվող սուբյեկտների՝ մաքսային իրավախախտումների համար պատասխանատվության առանձնահատկություններին:*

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ նաև՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգիրք) 127-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և այլ ապրանքներ նույն Օրենսգրքով սահմանված դեպքերում Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից արտահանվելու և (կամ) Միության մաքսային տարածքից դուրս գտնվելու և օգտագործվելու համար ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման, եթե նույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է թվով 17 մաքսային ընթացակարգ, որոնցից յուրաքանչյուրի կիրառումը պայմանավորված է ապրանքները Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից արտահանվելու և (կամ) Միության մաքսային տարածքից դուրս գտնվելու և օգտագործվելու նպատակով: Նույն հոդվածի 4-րդ

կետի համաձայն՝ մաքսային ընթացակարգերի բովանդակությունը և մաքսային ընթացակարգերի կիրառման կարգը կարգավորող դրույթները, այդ թվում՝ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու պայմանները, այդ մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելուց հետո դրանք մաքսային ընթացակարգերին համապատասխան օգտագործելու պայմանները և կարգը, մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու, դադարեցնելու, կասեցնելու և վերականգնելու կարգը, ինչպես նաև մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացման և դադարման հանգամանքները, մաքսային ընթացակարգերով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների կամ մաքսային ընթացակարգեր կիրառելու շրջանակներում ստացված (գոյացած), պատրաստված (ստացված) ապրանքների մասով դրանց հաշվարկման և վճարման ժամկետները և (կամ) առանձնահատկությունները սահմանվում են նույն բաժնի համապատասխան գլխիներով, իսկ նույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ Հանձնաժողովի կողմից և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերից է «մաքսային տարածքում վերամշակում» ընթացակարգը (ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետ): Այս մաքսային ընթացակարգի բովանդակությունը սահմանված է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետում: Այն է՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում այդպիսի ապրանքների հետ կատարվում են վերամշակման գործողություններ՝ դրանց վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքից հետագա արտահանման համար՝ առանց այդպիսի օտարերկրյա ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և դրանց օգտագործման պայմանները՝ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

«Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը պահպանելը.

2) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված գործողություններ կատարելու դեպքում նույն Օրենսգրքի 166-րդ հոդվածի դրույթները պահպանելը.

3) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների

մասին փաստաթղթում նշված անձանց մոտ գտնվելը և այդ անձանց կողմից ապրանքների վերամշակման գործողությունների կատարման համար այդպիսի ապրանքներն օգտագործելը:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը սահմանվում է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետի հիման վրա, որը սահմանված է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների փաստաթղթում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը երկարաձգվում է անձի դիմումի հիման վրա Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելիս:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 17.10.2022 թվականին) 193-րդ հոդվածը սահմանում էր. «1. Հայտարարատուի դիմումի հիման վրա «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծումը թույլատրվում է մաքսային մարմինների կողմից մեկ տարին չգերազանցող ժամկետով:

Եթե հայտարարատուի խնդրարկած ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա երկարաձգում է այդ ժամկետը՝ ներմուծման օրվանից մեկ տարին չգերազանցող ժամկետով:

2. Կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բաց թողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված՝ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ՝ մինչև երկու տարին չգերազանցող ժամկետով:»:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է մինչև «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտման հիմքը: Այն է՝ մինչև «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (...) և (կամ) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով: Նշված կարգավորումը բխում է «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի բուն էությունից ու բովանդակությունից և համակարգային փոխկապվածության մեջ է գտնվում նույն օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած)

ապրանքների (վերամշակման արդյունքների, թափոնների, բացառությամբ նույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ կետում նշված և (կամ) մնացորդների) նկատմամբ՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ նույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավարտելու համար:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է այն դեպքերը, որոնց առկայությամբ ևս «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուի՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից (...):

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալու օրը, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը: Եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման: Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ (...)

(ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 5-րդ կետ):

Վերոհիշյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված մաքսային ընթացակարգերից է «մաքսային

տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգը: Վերջինս կիրառելի է օտարերկրյա ապրանքների առնչությամբ, որոնց հետ կատարվում են վերամշակման գործողություններ՝ դրանց վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքից հետագա արտահանման համար:

«Մաքսային տարածքում վերամշակում» ընթացակարգի գործողությունն ունի որոշակի ժամկետ, որը սահմանվում է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետի հիման վրա: Այդ ժամկետի պահպանումը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Սահմանված է նշված ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորություն: «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետի լրանալու իրավական հետևանքը այդ մաքսային ընթացակարգի գործողության դադարումն է: Նշվածից բխում է, որ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով օտարերկրյա ապրանքներ ներմուծողը կրում է այդ ընթացակարգի գործողության ժամկետում վերամշակման արդյունքն արտահանելու պարտավորություն:

Պայմանավորված «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի էությամբ և բովանդակությամբ՝ այդ ընթացակարգի գործողությունը մինչև գործողության սահմանված ժամկետը լրանալն ավարտվում է Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները և (կամ) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով (ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետ): «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը մինչև գործողության սահմանված ժամկետը լրանալը կարող է ավարտվել նաև ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերում: Եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որևէ հիմքով չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման մաքսային մարմնի կողմից սահմանված «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալու օրը: Ընդ որում, **այդ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:**

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը, ապա **ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությամբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով օտարերկրյա ապրանքներ ներմուծած անձը կրում է նշված ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետի լրանալու օրը «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտականություն՝ անկախ ապրանքները ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությամբ ներմուծելու հանգամանքից:**

Օրենսդիրը սահմանել է պատասխանատվություն «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների վերամշակման արդյունքը նշված ընթացակարգի գործողության ժամկետում արտահանելու պարտավորությունը չկատարելու համար:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ մաքսային օրենսգրքի (ուժը կորցրել է 17.10.2022 թվականին) (այսուհետ՝ Մաքսային օրենսգրք) 199-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:»:

Նշված մաքսային իրավախախտման զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է.

-հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու,

-հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելու ձևով:

Հաշվի առնելով, որ սահմանված ժամկետում հետագա արտահանման պարտավորություն կրում է, ի թիվս այլոց, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքներ ներմուծողը՝ Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածը պատասխանատվության իրավական հիմք է այն անձի համար, ով նշված ընթացակարգի գործողության ժամկետում վերամշակման արդյունքը չի արտահանել:

Նշված իրավախախտման համար սահմանված տուգանքի չափի հաշվարկման համար ելակետ են խախտման օրվա դրությամբ չարտահանված (չներմուծված) ապրանքների և

տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները: Մաքսային վճարները ներառում են ներմուծման մաքսատուրքը, արտահանման մաքսատուրքը, ավելացված արժեքի հարկը, որը գանձվում է Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման ժամանակ, Միության մաքսային տարածք ապրանքները ներմուծելիս գանձվող ակցիզները (ակցիզային հարկը կամ ակցիզային վճարը) և մաքսավճարները (ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին կետ):

Հիմք ընդունելով ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի վերը նշված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքի վերամշակման արդյունքը չարտահանելու դեպքում Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սանկցիայի բովանդակության մեջ «խախտման օր» է հանդիսանում այս ընթացակարգի գործողության ժամկետի լրանալուն հաջորդող օրը, երբ ներմուծողի մոտ ծագում է մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտականություն այնպես, ինչպես այդ վճարումը կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ **առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:**

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 3-րդ հավելվածով (այսուհետ՝ Հավելված 3) սահմանված են անցումային դրույթներ: Հավելված 3-ի 12-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում գտնվող և մինչև Պայմանագիրն ուժի մեջ մտնելը «ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «վերաներմուծում» և «սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից համարվում են, համապատասխանաբար, «ներքին սպառման համար բացթողում», «վերաներմուծում» և «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքներ և ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերի և ուրիշ ակտերի դրույթները:»:

Վերոհիշյալի հիման վրա հաշվի առնելով, որ հետագա արտահանման պարտավորությունը չկատարելու դեպքում ներմուծողի համար ծագում է մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտականություն, որոնք պետք է վճարվեն այնպես, ինչպես եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված

լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ անկախ ապրանքները ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությամբ ներմուծելու հանգամանքից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի չափի հաշվարկման համար ելակետ պետք է ընդունվեն այն մաքսային վճարները, այդ թվում՝ մաքսատուրքերը, որոնք ներմուծողը պետք է վճարեր այնպես, ինչպես կվճարեր տվյալ ապրանքը «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ռեժիմով ներմուծելու դեպքում՝ անկախ ներմուծման արտոնությամբ այդ ապրանքները ներմուծելու հանգամանքից:**

Հետևաբար, ներմուծման մաքսատուրքից ազատված լինելու հանգամանքը որևէ կերպ չի կարող անդրադառնալ նման արտոնություն ունեցող անձին Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելիս տուգանքի չափի վրա: Մասնավորապես, Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված տուգանքի չափը որոշելու տեսանկյունից մաքսատուրքից ազատված լինելու հանգամանքը որևէ իրավական նշանակություն չունի և մաքսային վճարների շրջանակից չի կարող բացառել այն մաքսատուրքի գումարը, որից տվյալ ներմուծողն ազատված է եղել: Այլ կերպ՝ և՛ ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվող սուբյեկտի, և՛ նման արտոնությունից չօգտվող սուբյեկտի համար գործում է Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված տուգանքի միևնույն չափը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման սուբյեկտը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվող անձն է, վերջինիս նկատմամբ նշանակվում է տուգանք՝ այն մաքսային վճարների (այդ թվում՝ մաքսատուրքերի) մեծության 50 տոկոսի չափով (բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ), որոնք վերջինս կվճարեր այնպես, ինչպես տվյալ ապրանքը «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ռեժիմով ներմուծելու դեպքում:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետի 23.09.2020 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» 913/1 որոշումը և Կոմիտեի նախագահի տեղակալի 11.11.2020 թվականի որոշումը:

**Դատարանի** 18.03.2022 թվականի վճռով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ. *«(...) Էդգար Խառատյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության որպես Ընկերության տնօրեն, որի պարտականությունների մեջ է մտել ղեկավարել ընկերության ընթացիկ գործունեությունը, ապահովել ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը: Հետևաբար պատասխանատու աշխատակցի կորոնավիրուսով հիվանդ լինելու հանգամանքը չի կարող հանդիսանալ հիմնավոր պատճառ փուզանքը չեղարկելու համար:*

(...) ՀՀ Կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ցամաքային սահմանի անցակետով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքն արգելվում է, բացառությամբ ապրանքների փոխադրումն իրականացնող անձանց: Պարետի որոշմամբ կարող են սահմանվել ՀՀ-ից ելքի առանձնահատկություններ:

Հետևաբար դիրքորոշումն առ այն, որ պարտավորության ժամկետի ավարտին երկրում գործել է արտակարգ դրություն և այդ հիմնավորմամբ չի իրականացվել ապրանքների արտահանում, առարկայազուրկ է:

(...) Սույն վարչական գործով հաստատվել է, որ «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊ ընկերության անվամբ 04.09.2019թ. թիվ 05100010/040919/0081996 ապրանքների հայտարարագրով «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ մինչև 03.09.2020թ. հայտարարագրվել է չվերամշակված կանաչ ձիթապտուղ, սակայն սահմանված ժամկետում նշված ապրանքը չի արտահանվել կամ ձևակերպվել այլ մաքսային ընթացակարգով, ինչի արդյունքում խախտվել է հետադարձ արտահանման պարտավորությունը:

Ինչպես վարչական վարույթում, այնպես էլ վիճարկման հայցի շրջանակներում հայցվոր կողմը չի վիճարկում այն փաստը, որ տեղի է ունեցել ՀՀ ներմուծված ապրանքի հետադարձ արտահանման պարտավորության խախտում:

(...) հայցվորը չի պահպանել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված պահանջները, մասնավորապես՝ 04.09.2019 թվականին «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊ ընկերության կողմից Արարատյան մաքսային կետով թիվ 05100010/040919/0081996 ապրանքների հայտարարագրով «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ մինչև 03.09.2020 թվականը, հայտարարագրվել է չվերամշակված կանաչ ձիթապտուղ, սակայն հայցվորը սահմանված ժամկետում ապրանքների մնացորդ 29,930.50 կգ մասը չի վերաարտահանել կամ ձևակերպել այլ մաքսային ընթացակարգով, հետևաբար դատարանը գտնում է, որ վարչական մարմնի աշխատակիցների գործողությունները իրավաչափ են, այն բխում է ՀՀ օրենսդրական պահանջներից և խախտումն արձանագրելու համար հիմք հանդիսացած փաստարկներից, հետևաբար վարչական ակտը վերացնելու (անվավեր ճանաչելու) հայցվորի պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:(...):»:

**Վերաքննիչ դատարանը** 25.04.2024 թվականի որոշմամբ Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանի վերաքննիչ բողոքը բավարարել է. Դատարանի 18.03.2022 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ հայցն ամբողջությամբ բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) տեղին է հայցվորի բարձրացրած հիմնահարցն այն մասին, որ ընկերությունն ազատված է մաքսավորությունից, ուստի, ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության տեսանկյունից մաքսավորությունը չպետք է ներառվեն մաքսային վճարների մեջ:

(...) թե՛ վարչական վարույթի, թե՛ Դատարանում գործի քննության ընթացքում վարչական մարմինը չի հերքել հանգամանքն առ այն, որ սույն դեպքում քննարկվող ապրանքի մասով հայցվոր ընկերությունն ազատված է եղել մաքսատուրքից՝ ՀՀ կառավարության 14.03.2019 թվականի թիվ 215-Ա որոշման հիմքով: Որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանը չի կարող կասկածի տակ դնել հայցվոր կողմի վերոնշյալ պնդումը: Ավելին, համադրելով մի կողմից՝ ՀՀ կառավարության 14.03.2019 թվականի թիվ 215-Ա որոշմամբ հաստատված հավելվածում տեղ գտած տվյալները և մյուս կողմից՝ 04.09.2019 թվականի թիվ 05100010/040919/0081996 ապրանքների հայտարարագրում տեղ գտած տվյալները՝ Վերաքննիչ դատարանը դրանցում չի նկատել որևէ հակասություն: Որպես օրինակ, 04.09.2019 թվականի թիվ 05100010/040919/0081996 ապրանքների հայտարարագրում, որպես ապրանք, նշված է կանաչ ձիթապտուղ՝ վերամշակման համար, ծագման երկիր՝ Եգիպտոս և այլն: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ենթադրյալ խախտման համար ՀՀ մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի չափը որոշելիս, տվյալ դեպքում մաքսատուրքերը չպետք է ներառվեն մաքսային վճարների մեջ, քանի որ ՀՀ կառավարության 14.03.2019 թվականի թիվ 215-Ա որոշման հիմքով հայցվոր ընկերությունն ազատված է եղել մաքսատուրքից: Որպիսի պարագայում, աներկբա, սխալ է որոշվել «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծությունը և հաշվարկվել տուգանքի չափը:»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

14.03.2019 թվականի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» թիվ 215-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը բավարարել է Ընկերության կողմից ներկայացված հայտը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար և սահմանված կարգով կիրառել է համապատասխան արտոնությունը՝ համաձայն հավելվածի ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ: Թիվ 215-Ա որոշման հավելվածի

համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի արտոնությունից օգտվող հումքն է կանաչ ձիթապտուղը:

Ընկերության կողմից ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառմամբ Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել Թիվ 215-Ա որոշմամբ նախատեսված հումքը՝ կանաչ ձիթապտուղ՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով: Վերամշակման արդյունքում ստացված ապրանքը, սակայն, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետում չի արտահանվել, որպիսի փաստն անվիճելի է: Վիճարկվող որոշմամբ Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի հիմքով՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները սահմանված ժամկետում չարտահանելու համար: Նշված արարքը հայցվորի կողմից կատարված լինելու փաստը ևս անվիճելի է: Վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությունից բխում է, որ վերջինս վիճարկվող վարչական ակտը ոչ իրավաչափ է համարել միայն այն պատճառաբանությամբ, որ Ընկերության՝ ՀՀ կառավարության Թիվ 215-Ա որոշման հիման վրա ներմուծման մաքսատուրքից ազատված լինելու փաստի հաշվառմամբ «տուգանքի չափը որոշելիս մաքսատուրքերը չպետք է ներառվեն մաքսային վճարների մեջ»:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը հիմնավոր չէ, չի բխում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի վերը նշված կարգավորումներից, ինչպես նաև մաքսային արտոնության էությունից ու բովանդակությունից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշված դիրքորոշումը ձևավորելիս հաշվի չի առել ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 5-րդ կետի նորմը, ըստ որի՝ եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ **առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:**

Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումը չի բխում նաև մաքսային արտոնության էությունից ու բովանդակությունից: Մաքսային արտոնությունը դրսևորվում է որոշակի կոնկրետ նպատակի համար որոշակի խումբ սուբյեկտների մաքսային վճարներից ազատելու ձևով: Մաքսային արտոնությունը, սակայն, չի կարող դրսևորվել նաև ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորած մաքսային արտոնությունից օգտվող սուբյեկտի պատասխանատվության առնչությամբ: Այն հանգամանքը, որ տվյալ սուբյեկտն օգտվել է մաքսային վճարներից ազատելու արտոնությունից, որևէ իրավական հետևանք ու

ազդեցություն չի կարող ունենալ այն դեպքում, երբ վերջինս ոչ իրավաչափ վարքագծի համար ենթարկվում է պատասխանատվության: Նշված հանգամանքը որևէ կերպ չի կարող անդրադառնալ տվյալ ոչ իրավաչափ վարքագծի համար օրենքով սահմանված սանկցիայի չափի վրա:

Սույն դեպքում ՀՀ կառավարության Թիվ 215-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է մաքսային արտոնություն, որը դրսևորվել է վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կանաչ ձիթապտղի ներմուծման մաքսատուրքից ազատելու ձևով: Ընկերությունը ձիթապտուղը ներմուծել է «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, սակայն այդ ընթացակարգի գործողության սահմանված ժամկետում վերամշակման արդյունքը չի արտահանել, որպիսի պայմաններում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Ընկերության համար ծագել է ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Ընկերության տնօրեն Էդգար Խառատյանին պատասխանատվության ենթարկելիս դրանով նախատեսված տուգանքի չափը հաշվարկելիս պետք է հիմք ընդունվի այն մաքսային վճարների, այդ թվում՝ մաքսատուրքի, չափը, որոնք Ընկերությունը ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 174-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան պարտավոր էր վճարել «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի ավարտման օրն այնպես, ինչպես կվճարեր դրանք, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման: Այլ կերպ՝ Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի չափը որոշելիս մաքսային վճարների շրջանակից չի կարող բացառվել մաքսատուրքի գումարը՝ պայմանավորված այն փաստով, որ Ընկերությունը կանաչ ձիթապտուղը ներմուծել է օգտվելով մաքսատուրքից ազատելու արտոնությունից:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտերն ընդունված վարչական մարմնի կողմից Մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասն Ընկերության տնօրենի նկատմամբ կիրառվել է ճիշտ մեկնաբանությամբ, որպիսի պայմաններում իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու հիմքում դրված այն պատճառաբանությունը, որ «տուգանքի չափը որոշելիս մաքսատուրքերը չպետք է ներառվեին մաքսային վճարների մեջ»:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում վիճարկվող վարչական ակտերի անվավերության հիմքերի բացակայության վերաբերյալ Վարչական դատարանի փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր է: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

## **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի

ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով այն, որ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար արդեն վճարվել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերած անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Էդգար Խառատյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2024 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 18.03.2022 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. «Նիկոլա Ինթերնեյշնլ, Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Խառատյանից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

գեկուցող

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

